

բաժնուելուն վերայ: Երկրապատն ճահանաներ բերել տունն տեղեակ տառից, զորս և զրկեցին յԱսորիս, առ Փրանկս, և յԵղիպտոս¹, որպէս զի ամեն լեզուով զրուած զրոց մեկնութիւններ հաւաքեն, նաեւ վարդապետութիւններ, Սրբոց և մարտիրոսաց վարդեր: Այս մարտիրոսներն² սփռուեցան յերկիրս Եղիպտոսի, Փրանկաց և Ասորոց և հաւաքեցին ան-


բաւ քանակութիւն զրոց, և հարստացան բանիս Գրոց և մեկնութեանց: Եւ այսպէս կեցան ի ճշմարիտ ուղղափառ հաւատոս:

Այսպիսի եղաւ պատճառ Հայոց Հոռովմէն բաժանման:

Վերջ պատմութեան Հայոց և Հռովմայ, Թաղաւորին Տրդատայ և Սարգսի. օրհնութեամբ Աստուծոյ. Ամէն:

Ճ Ա Շ Ա Կ Մ Ի

ԿԵՍԱՐԱՐԱՅԻ ՀԱՅ ՈՍԿԵՐՋՈՒԹԵԱՆ



Ա եղարուեստը՝ աւելի քան զգեղեցիկ և զպրութիւն, ըստ եւրոպական ճաշակի, դարուս կիսէն ետեւ զգալի կերպով կը զարգանան և կը փայլին մերազգեաց մէջ. և քանի մի մասանց արուեստին ականատես և ականխաւոր վկայք և զարմացողք գտուին և ի մայրաքաղաքս՝ ուր՝ մեր ճարտարքն յուսացընեն յոչ միայն օտարազգի հռչակաւոր ճարտարաց հետեւիլ, այլ և մրցիլ անոնց հետ. և մրցանքն չէ հետի ի յաղթութենէ: Բայց արուեստական հանճար Հայոց՝ նոր չէ արթնցեր. հազարաւոր տարինեւէ և գոնէ Ե դարէ ի վեր՝ նիւթական վայելուչ յիշատակարաններ ալ կանգնած և թողած է, մանաւանդ ճարտարապետութեան և քանդակագործութեան. որոց վրայ հաճութեամբ և գովութեամբ նայած են և նային գիտնական տեղաբնիկը: Այս յիշեալ ճարտարութեան տեսակաց հաւասար՝ չեմք կրնար բռն մերայոց պատկերազանսութիւնն և քանդակագործութիւնն. սակայն ոչ սակաւ վայելչութիւն, հնարք և ճարտարութիւն կ'երեւի իրենց՝ ԺԲ-ԺԿ դարուց և յետոյ ԺԷ-Մ դարուց ձեռագորաց գունազեղ և ոսկեխառն զարդուց վրայ, միանգամայն և աննոց անեղծ

և պայծառ մնալու արուեստին մէջ. որոց վերայ այլ զարմանալով նային բանգէտ եւրոպացիք, և բաղդով կամ դժբաղդութեամբ՝ խելով յազգայնոց՝ կու տանին իրենց հեռաւոր տուններու և թանգարաններու: Կ'արժէ անշուշտ այս արուեստական ճարտարութեանց իւրաքանչիւր ճիւղին վրայ՝ խնամով քննութիւն ընել և հրատարակել, միանգամայն և գիտնօրէն բաղդատութեամբ ժամանակին և ժամանակակցաց (օտարաց). զոր թողով առայժմ կարողաց և հմտից, մեր հիմկու դիտաւորութիւնն է այն հարազատ արուեստից միջէն՝ ազգային Ոսկերչութեան ճաշակ մի ընծայել, յորում՝ ոչ նուազ քան յայլն՝ յաղապարհութիւնն Հայոց ժանուցուած է իւրայնոց և օտարաց:

Հանճար և արուեստ՝ յատուկ տեղ և հայրենիք չունին. սակայն կայ տեղ ուր աւելի քան ուրիշ տեղ արուեստ մի զարգանայ, կամ հետեւող կ'ունենայ. այսպէս կրնամք համարել մեր Կեսարացոց Ոսկերչութիւնն ալ. որոց մէկ ձեռագործին պատկերն է ահաւասիկ, ասկի 222 տարի առաջ շինուած, այսինքն յամի 1672. և է Տօնացոցի, Պարզատումարի և Ժամակարգութեան երգոց՝ ձեռագրի մի կողք կամ կողմ. Թանձր արծաթեղէն թիթեղով օսկէջրած: Բարձրաքանդակ կամ ուռուցիկ պատկերներն և զարդերն՝ ակներեւ կան տեսողաց, և իւրաքանչիւրի դատման: Կունակին արձանագրութիւնն (որոյ քերականական շարադրութիւնն չատ

1. Յայտնի է մեր Թարգմանչաց համար Ը սուրին:

2. Փոխանակ ըսելով. քահանաներն կամ վարդապետներ:

նուազ է քան զքանդակագործութիւնն) ,
 թուականին հետ կ'իմացընէ արուեստագործն
 ալ, այսպէս (միահետ օրինակելով) .

« Երգարանս այս (ար)արեալ հալալ ընչիս իւր
 » (ընչիւք) զարդարեցի արծաթաւ, կեսարիա
 » քաղաքին, անարժան ձեռքը, արծաթագործ
 » Եհիշբէն Մ. Յուրբ. Թիւն Հայոց Ռ. Ճ. Ի.
 » վասն յիշխութեան ամենայն ժամ և զօւ
 » հանալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի » :
 Թէ՛ Եահմիր և Յակոբ նոյն անձն է, թէ՛ մին
 արուեստաւորն և միւսն ստացողն, և թէ՛ ինչ
 նշանակէ երկու անուանց մէջ Մ. տառն, յաւ
 լողաց մնան ստուգելիք (Մահրէպ) » :

Գրոց կազմին առաջին կամ վերին երեսն
 ներկայացընէ զԱստուած, պետական գաւա
 զան ի ձեռին, բազմաւ տաճարի մի վերեւ՝ ի
 Քերովքէս, կամ ի միջի վեցթեւեան Սերով
 բէից. որոց մէկն ունելեաք կրակ մի զնէ ի
 բերան Եսայեայ մարգարէի, ինչպէս որ սա
 ըսած է իր գրոց մէջ (Ա. 1-8). երկու կող
 մերուն զոյգ զոյգ և ներքեւն միակարգ՝ կան
 24 պատկերք և անուանք զբաւոր և անգիր
 մարգարէից. յաջ կողմն (նայողիդ ձախն)
 Մովսէս և Յիսուս. Յոբ և Սաբաղ. Նաբոն և
 Դաւիթ. Եղիշ և Եղիշ. ի ձախ կողմն Ովսէ
 և Ահիւ. Միքի և Յովի. Բծնա և Նաաթ. Ահ
 բալա և Սաբաղ. իսկ ներքեւն Եսայի. Երեմի
 Դաւիթ. Մարգարէ. Զաքարի. Աբրահ. Անի
 Դաւիթ. Մարգարէ. Զաքարի. Աբրահ. Անի

Կազմին միւս կամ վարի երեսն ներկայա
 ցընէ Երուսաղեմի տաճարը, և զՔրիստոս՝ որ
 ձեռքը ցուցընէ զայն, և թուի՝ չորս առաքե
 լոց ցուցընելն (Պետրոսի, Անդրէասայ, Յա
 կոբու եւ Յովհաննու՝ որ անմօրեղն է), ըս
 տելով, « Եկեսցէ ժամանակ՝ յորում ոչ թողցի
 այգր քար ի քարի վերայ » : Կրնար և կար
 ծուիլ՝ թէ միւս նշանաւոր խօսքը նշանակէ .
 « Քակեցէք գտաճարդ զայդ, և յիրիս աւուրս
 » կանգնեցիք զգա » . իր մահն և երեքօրեայ
 Յարութիւնը գուշակելով, Երեք կողմի պատ
 կերներն են երկոտասան Առաքելոց. ալ սեանն՝

Պետրոս. Պողոս. Անդրէաս. Յովհանն. Թա
 սմանն՝ Բարդուղիմէոս) . Յովհ. Սիմ. Թա
 դէոս. Մարկէոս. ներքեւի երկու միջինքն՝ Փե
 լղալոս. Բարձաբ. զսա և զՊողոս երկոտասա
 նից թըւում զնելով, զարմանք է, որ արուես
 տաւորն դուրս թողեր է զՅովհաննէս և ըզ
 Յուրա Յակովբեան, Կոնստի արձանագրու
 թեան ներքեւն ալ՝ Յիսուսի ազգահամարին
 մէջ յիշուածներէն՝ երեք նահապետաց ա
 նուանք են, Աբրահա. Փաբա. Նաաթ. առջինն՝
 ոչ միայն նահապետ այլ և ազգապետ ըլլա
 լով՝ վայելուչ էր յիշուելն. միւս երկուքին
 ինչ էր առաւելութիւնն քան զայլ նահապետս,
 որ յիշուելու արժան համարուին. — Յով
 հաննէս առաքեալ և աւետարանիչը շշխոյն՝
 գիտէ զատոնք այլ յիշելու պատճառը. զոր
 կամ ինքն կարեւոր համարած է, կամ նոյնպէս
 իրեն հետեւող մ'ալ :

Եւ է սա Մովսէս ուրբալ-ուրբալ կեսարացի,
 որ առջինէն քսան տարի մի վերջը, 1691),
 նոյնպիսի արծաթեայ կազմի ինձած է Ժաւ
 մագրոց, նմանաբան արձանագրութեամբ կրու
 նակին. « Ժամագրիքս այս (ար)արեալ հալալ
 ընչիս... արծաթագործ Մովսէսն Մ. Կորբ
 պետ: Թիւն Ռ. Ճ. Ի. վասն յիշողութեան » ,
 և այլն : Այս արձանագրութեան ներքեւ այլ
 կան այդ երեք նահապետաց անուանքն : Իսկ
 երկու երեսաց առաջինին վրայ պատկերա
 ցեալ է Մնունդ Փրկչին, սովորական ծանօթ
 կերպով, հովիւներով, հրեշտակներով և այլն,
 և քանի մի աւետարանի խօսքերով. միւս ե
 րեսն ներկայացընէ զՅարութիւն Քրիստոսի,
 զերեքմանով, պահապանք, հրեշտակով և
 իւզարեք կանամբք : Ասոնց ստորագրութիւնն
 և պատկերաստղութիւնը՝ գուցէ օր մի ի լոյս
 հանէ մեր բարեկամն ստացող, լաւագոյն կեր
 պով և իր մանրակրկիտ ոճով, եթէ կ'արժէ :

Մուտքին յիշել որ Եհմիրին կազմած
 զգրին զրոյն և ստացողն Խաչատուր կոչուի .
 ուրիշ պատմական յիշատակ չկայ զգրին մէջ :

